

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ղրույթներ

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) Ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ԳՊՀ-ում գործող ուսանողական կազմակերպություն է, որի նպատակն է սովորողների գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը նպաստելը:
2. Ընկերությունը գործում է ՀՀ օրենսդրության, ԳՊՀ Կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:
3. Ընկերությունն իր նպատակների իրականացման համար համագործակցում է ԳՊՀ ուսանողական խորհրդի, ԳՊՀ գիտական խորհրդի, ֆակուլտետների խորհուրդների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ:
4. Ընկերությունը կարող է հրատարակել գիտական հոդվածների ժողովածու, ունենալ խորհրդանշան, ձևաթուղթ, համացանցային կայք:
5. Ընկերության անվանումն է՝ հայերեն՝ Ուսանողական գիտական ընկերություն, ռուսերեն՝ հՅԳՊպվփպրՍՏպ ծՈցփվՏպ ԿոքպրՅՉՏ, անգլերեն՝ Student Scientific Society, իսկ հապավումը հայերեն՝ ՈՒԳԸ, ռուսերեն՝ հՏԿ, անգլերեն՝ SSS:
6. Ընկերությունը գործում է Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ 1201, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

II. Ընկերության նպատակն ու խնդիրները

7. Ընկերության նպատակն է նպաստել ուսանողության ընդհանուր աշխարհայացքային և մասնագիտական աճին, գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:
8. Ընկերության խնդիրներն են.
 - 1) գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների խրախուսում և իրականացում,
 - 2) ուսանողական գիտաժողովների, սեմինարների, քննարկումների, բաց դասախոսությունների և այլ գիտական ու կրթական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպում,
 - 3) համակողմանի աջակցության ապահովում հետազոտական հակումներ ունեցող ուսանողներին,
 - 4) տարբեր գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկում,
 - 5) ուսանողների գիտական աշխատանքների և այլ նյութերի հրատարակում,
 - 6) այլ գիտական կենտրոնների հետ կապերի ստեղծում և համագործակցության ապահովում:

III. Ընկերության կառուցվածքը և ղեկավար մարմինները

9. Ընկերության կառուցվածքային սկզբնական մարմինները ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերություններն են (այսուհետ՝ ֆակուլտետի ՈԲԸ), որոնք ձևավորվում են ամբիոնների երաշխավորությամբ ներկայացված առնվազն երեք ուսանողներից: Ֆակուլտետի ՈԲԸ-ն մշակում և իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են ԳՊՀ Ընկերության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը:
10. Ֆակուլտետի ՈԲԸ-ի առաջադրմամբ ֆակուլտետի խորհուրդը հաստատում է ֆակուլտետի ՈԲԸ-ի նախագահի և քարտուղարի թեկնածությունները, որոնք կազմակերպում են ֆակուլտետի ՈԲԸ-ի աշխատանքները, համակարգում են նրա աշխատանքները, ներկայացնում ֆակուլտետի ՈԲԸ-ն և նրա ծրագրերը ԳՊՀ Ընկերության գիտական խորհրդում:
11. Ֆակուլտետի ՈԲԸ-ի նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրվում են նախագահի կողմից կամ անդամների 1/3-ի պահանջով: Նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են անդամների ավելի քան 1/2-ը, իսկ որոշումներն ընդունվում են անդամների ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ: Ֆակուլտետի ՈԲԸ-ն կարող է մշակել իր կանոնակարգը և իրականացնել սույն կանոնադրությանը չհակասող այլ գործառնություններ:
12. Ֆակուլտետի ՈԲԸ-ի նախագահը հանդիսանում է ֆակուլտետի խորհրդի անդամ, ԳՊՀ ՈԲԸ գիտական խորհրդի անդամ:
13. Ֆակուլտետի ՈԲԸ-ն կարող է կազմակերպել ուսանողական մասնագիտական ակումբներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել ֆակուլտետի այլ ուսանողները:
14. ԳՊՀ Ընկերության ղեկավար մարմինը Ուսանողական գիտական ընկերության գիտական խորհուրդն է, որի նիստերը գումարվում են ուսումնական կիսամյակում ոչ պակաս, քան երկու անգամ:
15. Ընկերության գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են Ընկերության նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, ֆակուլտետային ՈԲԸ-ների նախագահները:
16. Ընկերության գիտական խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառնությունները.
 - 1) քննարկում և որոշում է Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, միջոցներ է ձեռնարկում որոշումների իրականացման համար,
 - 2) առաջարկություններ է ներկայացնում ԳՊՀ գիտական խորհրդին, Ուսանողական խորհրդին, ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին,
 - 3) ի գիտություն է ընդունում Ընկերության նախագահի տարեկան հաշվետվությունը,

- 4)մշակում է Ընկերության հեռանկարային և ընթացիկ ծրագրերը, հաստատում է ֆակուլտետային ՈւՖԸ-ների ծրագրերը և համակարգում նրանց աշխատանքները,
- 5)հաստատում է իր աշխատակարգը,
- 6)որոշում է ընդունում շնորհել Ընկերության պատվավոր անդամի կոչում և կանոնակարգում է Ընկերության անդամությանը վերաբերվող այլ հարցեր,
- 7)վավերացնում է Ընկերության անունից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը:

17.ԳՊՀ Ընկերության գիտական խորհրդի նիստն իրավազոր է, եթե նրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի ավելի քան 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ:

18.Գիտական խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Ընկերության նախագահի, գիտական խորհրդի, անդամների մեկ երրորդի պահանջով:

19. Ուսանողական գիտական ընկերության նախագահն ընտրվում է Ընկերության անդամների կողմից՝ երեք տարի ժամկետով և ներկայացվում է գիտական խորհրդին:

20. Ընկերության անդամներն ընտրում են նախագահի տեղակալին և քարտուղարին՝ նույն ժամկետով:

21. Ընկերության նախագահն ի պաշտոնե հանդիսանում է ԳՊՀ գիտական խորհրդի անդամ:

22. Ընկերության գիտական խորհրդի անդամներ են հանդիսանում ֆակուլտետային ՈւՖԸ-ների նախագահները:

23. Ընկերության նախագահն ի պաշտոնե ներկայացնում է Ընկերությունը, համակարգում Ընկերության գիտական խորհրդի գործունեությունը, ապահովում է Ընկերության մարմինների համագործակցությունը, տալիս է լիազորագրեր, Ընկերության անունից կնքում պայմանագրեր և համաձայնագրեր:

24. Ընկերության նախագահը տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս ԳՊՀ գիտական խորհրդում:

25. Ընկերության նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում՝ ստանձնում է նրա լիազորությունները, համակարգում է քարտուղարության աշխատանքները և ՈւՖԸ գիտական խորհրդի կողմից ստեղծված մարմինների գործունեությունը, հանդես է գալիս կատարած աշխատանքների մասին հաղորդմամբ:

26. Ընկերության քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները:

IV. Ընկերության միջոցները և դրանց օգտագործման կարգը

27. Ընկերության միջոցները գոյանում են ԳՊՀ բյուջեից կատարվող հատկացումներից, նվիրատվություններից, հանգանակություններից, դրամաշնորհային ծրագրերից, ԳՊՀ կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

28. Ընկերությունը անվճար օգտվում է ԳՊՀ տարածքից, գույքային, կյուբատեխնիկական միջոցներից:

29. Ընկերության միջոցներն օգտագործվում են կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, սահմանված կարգով:

V. Ընկերության գործունեության դադարեցման կարգը

30. Ընկերությունն իր գործունեությունը դադարեցնում է ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: